



## **Հեռաքրքիր պատմություն Մեծ Հայքի նահանգների անվանումների մասին**

- Ասում են՝ Հայկ Աղեղնավորի հայր Թորգոմը ապրում էր Բաղեշի Տավրոս լեռան վրա: Ինքը՝ Թորգոմն է լեռը կոչել Տավր, Տավրոս կամ Ցուլ: Տավրը նույն տավար բառն է: Լեռը Տավր է կոչվել, որովհետև նրա լանջերին արածում էին տավարի նախիրներ: Թորգոմը, սակայն, չէր կարող երկար ժամանակ մնալ լեռան վրա: Ժամանակի ընթացքում բազմանում է նրա տոհմը, և լեռան լանջերը չեն բավարարում թորգոմագուներին: Նրանք իջնում են լեռան առջև փռված դաշտը, որը Տավր լեռան համար ոնց որ բակ, գավիթ, բերան լիներ: Դրա համար էլ կոչվում է Տավրո բերան, որ հետո դառնում է Տուրուբերան:
- Քերթողահայր Մովսես Խորենացին հավաստում է, որ հայոց Վաղարշակ թագավորը՝ Գուշարին, որը Շարայի զավակներից էր, ժառանգություն է տալիս մի երկրամաս, որը սկսում է Կանգարք լեռից ու հասնում մինչև Հնարակերտ ամրոցը: Հավանաբար, այս Գուշարի անունով էլ նահանգը կոչվել է Գուշարի, որ հետո հնչունափոխվել է ու դարձել Գուգարք:
- Ըստ հայկական հին ավանդազրույցի՝ Հայոց երկրի թագավորը տասներկու զավակ է ունենում: Օրինաց կարգով նա ժառանգորդ է հռչակում իր ավագ որդուն: Բայց մյուս եղբայրները նախանձում են և նրան խեղդում գետի մեջ: Նույն բախտին է արժանանում նաև ըստ տարիքի գահակալելու իրավունք ստացած հաջորդ արքայագնը: Հայրը մտածում է, որ եթե այսպես շարունակվի, ապա բոլոր որդիները նախանձի զոհ կդառնան: Եվ նա իր տերության մեջ առանձնացնում է մի երկրամաս, որտեղ բնակություն են հաստատում բոլոր այն արքայագներն ու իշխանագուները, որոնք ավագ եղբայրներ ունեն, և արքա կամ իշխան հռչակվելու իրավունքը նրանց է պատկանում: Ահա այդ ժամանակներից էլ արքայագուներով և իշխանագուներով բնակեցված այդ երկրամասը կոչվեց Վասպուրական, այսինքն՝ ազնվականների ոստան: